

Հեռուստացույցների թվային կցուրդների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին Եվրոպական Հանձնաժողովի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 4-ի թիվ 107/2009 կանոնակարգ (ԵՀ)

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 036, 05/02/2009թ., էջ 0008 - 0014

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Էներգասպառող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանելու համար շրջանակ սահմանելու մասին և Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 96/57/ԵՀ և 2000/55/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգը [1], և մասնավորապես դրա 15(1) հոդվածը,

Էկոնախագծման հարցերի շուրջ խորհրդակցական համաժողովում քննարկումներից հետո,

Քանի որ

1) համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից Էներգասպառող այն արտադրատեսակների համար, որոնք ունեն վաճառքի էական ծավալներ և մեծ ապրանքաշրջանառություն, նշանակալից ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա և մեծ հնարավորություն ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու առումով՝ չհանգեցնելով չափազանց մեծ ծախսերի,

2) 2005/32/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգին և 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչներին համապատասխան, և էկոնախագծման հարցերի վերաբերյալ խորհրդատվական համաժողովում քննարկումներից հետո, Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, կընդունի կենցաղային էլեկտրական սարքերին ուղղված կիրարկող ակտեր,

3) Հանձնաժողովն իրականացրել է նախնական ուսումնասիրություն, որով վերլուծվեցին հեռուստացույցների պարզ թվային կցուրդների (այսուհետ՝ ՀՊԹԿ-ներ) տեխնիկական, բնապահպանական և տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունն իրականացվել է

ԵՄ և երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, և արդյունքները մատչելի են դարձվել հանրությանը,

4) նախնական ուսումնասիրության մեջ նշվել է, որ Համայնքում շուկայահանված ՀՊԹԿ-ների քանակը 2008 թվականին գրանցված 28 միլիոնից 2014 թվականին կհասնի մինչև 56 միլիոնի, և ՀՊԹԿ-ների կողմից սպառված էլեկտրականության քանակը 2010 թվականի 6 տերավատտ/ժամից 2014 թվականին կհասնի մինչև 14 տերավատտ/ ժամի, սակայն ՀՊԹԿ-ների էլեկտրականության սպառման ծավալները կարող են զգալիորեն կրճատվել տնտեսապես արդյունավետ եղանակով,

5) ՀՊԹԿ-ների էլեկտրականության սպառումը կարող է կրճատվել, եթե կիրառվեն առկա չարտոնագրված նախագծային լուծումներ, որոնք, թեև տնտեսապես արդյունավետ են, սակայն շուկայում ներկայացված չեն բավարար չափով, որովհետև վերջնական օգտագործողները ծանոթ չեն ՀՊԹԿ-ների ծախսերին, և արտադրողները խթան չեն ստանում օգտագործման ընթացքում այդպիսի լուծումները կրճատված էներգասպառման հետ ինտեգրելու համար,

6) ՀՊԹԿ-ների էներգասպառման համար էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Համայնքի ամբողջ տարածքում այդ սարքերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջները ներդաշնակեցնելու, ներքին շուկայի գործունեությունը և այդ սարքերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ցուցանիշները բարելավելու նպատակով,

7) սույն Կանոնակարգով շուկայում պետք է ավելանան այն տեխնոլոգիաները, որոնց միջոցով բարելավվում է ՀՊԹԿ-ների էներգաարդյունավետությունը՝ 2014 թվականին տարեկան էներգախնայողությունը, աշխատանքի սովորական սցենարի համեմատ, հասցնելով 9 տերավատտ/ժամի,

8) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է բացասական ներգործություն ունենան արտադրանքի աշխատանքի վրա և բացասաբար ազդեն առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի վրա,

9) էկոնախագծմանը ներկայացվող պահանջներն ուժի մեջ մտնելու փուլ առ փուլ գործընթացի շնորհիվ արտադրողներին կտրամադրի անհրաժեշտ ժամկետ՝ արտադրատեսակները վերանախագծելու համար: Փուլերի իրականացման ժամանակահատվածը պետք է սահմանվի այնպես, որ հնարավոր լինի խուսափել շուկայի վրա բացասական ազդեցություններից՝ կապված սարքավորումների աշխատանքի հետ և հաշվի առնվեն արտադրողների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների

ծախսերի ազդեցությունները՝ ապահովելով քաղաքականությամբ հետապնդվող նպատակների ժամանակին իրականացումը,

10) էներգիայի սպառման ծավալը պետք է չափվի լայն տարածում ունեցող ժամանակակից մեթոդներով. արտադրողները կարող են կիրառել 2005/32/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածին համապատասխան հաստատված ներդաշնակեցված ստանդարտներ,

11) սույն Կանոնակարգով սահմանված պահանջները պետք է գերակայեն այն պահանջների նկատմամբ, որոնք սահմանված են «Էլեկտրական ու էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքավորումների էներգասպառման՝ սպասման ու անջատված ռեժիմների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի թիվ 1275/2008 կանոնակարգով (ԵՀ) [2],

12) համաձայն 2005/32/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածի՝ սույն Կանոնակարգով պետք է սահմանվի, որ համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ 2005/32/ԵՀ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը,

13) համապատասխանության նկատմամբ ստուգումների գործընթացը հեշտացնելու համար արտադրողներից պետք է պահանջվի, որպեսզի նրանք տեղեկատվություն տրամադրեն 2005/32/ԵՀ հրահանգի V և VI հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում՝ այնքանով, որքանով այդ տեղեկատվությունը վերաբերում է սույն կիրարկող ակտով սահմանված պահանջներին,

14) պետք է սահմանվեն ներկայումս գոյություն ունեցող ցածր էներգասպառմամբ ՀՊԹԿ-ների հենանիշերը: ՀՊԹԿ-ների վրա «Օ Վ ռեժիմի» առկայությունը կարող է օժանդակել, որպեսզի սպառողները որդեգրեն էներգիայի անհարկի կորուստները նվազեցնելուն ուղղված վարվելակերպ և ընդունեն այդպիսի որոշումներ: Հենանիշերն օգնում են ապահովել տեղեկությունների հանրային մատչելիությունն ու հասանելիությունը հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների և չափազանց փոքր ընկերությունների համար. դա էլ ավելի է հեշտացնում լավագույն նախագծային տեխնոլոգիաների ինտեգրումը ՀՊԹԿ-ների էներգասպառումը նվազեցնելու համար,

15) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգով սահմանվում են հեռուստացույցների պարզ թվային կցուրդների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով՝ կիրառվում են 2005/32/ԵՀ հրահանգով սահմանված սահմանումները: Կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

1. հեռուստացույցների պարզ թվային կցուրդներ (<ՊԹԿ)>՝ ավտոնոմ սարք, որն անկախ օգտագործվող միջերեսներից՝

ա) որպես առաջնային ֆունկցիա՝ ստանդարտ հստակության (SD) կամ բարձր հստակության (HD) թվային հեռարձակման ազդանշանները փոխարկում է անալոգային հեռուստատեսության կամ ռադիոյի համար անհրաժեշտ անալոգային հեռարձակման ազդանշանների,

բ) չունի «պայմանական մուտքի» (CA) հնարավորություն,

գ) չի առաջարկում տեսաձայնագրման հնարավորություն՝ գրադարանային ստանդարտ ձևաչափում առկա փոխարինվող կրիչի հիման վրա:

<ՊԹԿ>-ները կարող են հագեցված լինել նաև հետևյալ լրացուցիչ հնարավորություններով և (կամ) բաղադրիչներով, որոնք չեն ներառվում <ՊԹԿ>-ներին ներկայացվող նվազագույն պահանջների շարքում՝

ա) ժամանակային տեղաշարժի և տեսաձայնագրման ֆունկցիա՝ համակցված կոշտ սկավառակի օգտագործմամբ,

բ) հեռարձակման բարձր հստակության (HD) ազդանշանների փոխարկում բարձր հստակության (HD) կամ ստանդարտ հստակության (SD) տեսանյութի,

գ) երկրորդ ընդունիչ.

2. սպասման ռեժիմ՝ վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցից, նախատեսված ձևով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման ցանցից ստացվող էներգիա և կատարում է միայն հետևյալ ֆունկցիաները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակ՝

ա) վերաակտիվացման ֆունկցիա կամ վերաակտիվացման ֆունկցիա և միայն միացված վերաակտիվացման ֆունկցիայի ցուցանշում, և (կամ)

բ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրիչ (դիսփլեյ):

3. վերաակտիվացման ֆունկցիա՝ ֆունկցիա, որը հնարավոր է դարձնում այլ ռեժիմների ակտիվացումը, ներառյալ ակտիվ ռեժիմը, որը միացվում է հեռակառավարման և հեռակառավարման վահանակի միջոցով, ներքին տեղեկությունների ցուցիչը, ժամաչափը լրացուցիչ ֆունկցիաների, այդ թվում՝ հիմնական ֆունկցիայի կատարման վիճակում.

4. տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրիչ՝ մշտական ֆունկցիա, որը ցուցադրիչի վրա տեղեկություններ է տրամադրում սարքավորման մասին կամ ցույց է տալիս դրա կարգավիճակը, ինչպես նաև ժամը.

5. ակտիվ ռեժիմ՝ վիճակ, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման ցանցից, ակտիվացված է պահանջվող ծառայության համար անհրաժեշտ՝ սարքավորման հիմնական ֆունկցիաներից առնվազն մեկը.

6. նվազ էներգասպառման ռեժիմ՝ ֆունկցիա, որի միջոցով ՀՊԹԿ-ը օգտագործողի կողմից վերջին անգամ միջամտությունից և (կամ) ալիքի փոփոխությունից հետո որոշակի ժամանակ ակտիվ ռեժիմով աշխատելուց հետո անցնում է սպասման ռեժիմի.

7. երկրորդ ընդունիչ՝ ՀՊԹԿ-ի մաս, որն ունի առանձին տեսաձայնագրման հնարավորություն՝ միևնույն ժամանակ թույլ տալով դիտել այլ հեռուստահաղորդում.

8. պայմանական մուտք (CA)՝ ծառայություններ տրամադրողի կողմից հսկվող հեռարձակման ծառայություն, որը պահանջում է բաժանորդագրմամբ մատուցվող հեռուստատեսային ծառայությունների շուկա:

Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

ՀՊԹԿ-ների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանվում են I հավելվածում:

Հոդված 4

Թիվ 1275/2008 (ԵՀ) կանոնակարգի հետ առնչությունը

Սույն Կանոնակարգով սահմանված պահանջները գերակայում են թիվ 1275/2008 (ԵՀ) կանոնակարգով սահմանված պահանջների նկատմամբ:

Հոդված 5

Համապատասխանության գնահատումը

2005/32/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ 2005/32/ԵՀ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:

Հոդված 6

Ստուգման ընթացակարգերը շուկայի վերահսկողության նպատակներով

Վերահսկողության նպատակով իրականացվող ստուգումներն իրականացվում են IV հավելվածով սահմանված ստուգման ընթացակարգին համապատասխան:

Հոդված 7

Հենանիշերը

III հավելվածով սահմանվում են ներկայումս շուկայում առկա լավագույն արտադրողականություն ունեցող/նվազ էներգատար արտադրանքի ու տեխնոլոգիաների հենանիշերը:

Հոդված 8

Վերանայումը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 5 տարի հետո Հանձնաժողովը վերանայում է այն տեխնոլոգիական առաջընթացի ներքո և այդ վերանայման արդյունքները ներկայացնում Խորհրդակցական համաժողով:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

I հավելվածի 1-ին կետը կիրառվում է առաջին պարբերությունում նշված ամսաթվից մեկ տարի հետո:

I հավելվածի 2-ին կետը կիրառվում է առաջին պարբերությունում նշված ամսաթվից երեք տարի հետո:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի փետրվարի 4-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Անդրիս Պիեբալզզ

Հանձնաժողովի անդամ

[1] ᄁS L 191, 22.07.2005ᄁ., ᄁᄁ 29:

[2] ᄁS L 339, 18.12.2008ᄁ., ᄁᄁ 45:

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո շուկայահանված ՀՊԹԿ-ները չպետք է գերազանցեն էներգասպառման հետևյալ սահմանաչափերը (համակցված կոշտ սկավառակ և (կամ) երկրորդ ընդունիչ ունեցող ՀՊԹԿ-ների նկատմամբ այդ պահանջը չի կիրառվում)՝

|Սպասման ռեժիմ|Ակտիվ ռեժիմ|

ՀՊԹԿ|1,00 Վտ|5,00 Վտ|

Սպասման ռեժիմում ցուցադրիչի ֆունկցիայի հնարավորություն |+1,00 Վտ|—|

HD ազդանշաններն ապակոդավորելու հնարավորություն | — | +3,00 Վտ |

2. Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո շուկայահանված ՀՊԹԿ-ները չպետք է գերազանցեն էներգասպառման հետևյալ սահմանաչափերը՝

|Սպասման ռեժիմ|Ակտիվ ռեժիմ|

ՀՊԹԿ|0,50 Վտ|5,00 Վտ|

Սպասման ռեժիմում ցուցադրիչի ֆունկցիայի հնարավորություն |+0.50 Վտ|—|

Կոշտ սկավառակի հնարավորություն | — | +6.00 Վտ |

Երկրորդ ընդունիչի հնարավորություն | — | +1.00 Վտ |

HD ազդանշաններն ապակոդավորելու հնարավորություն | — | +1.00 Վտ |

3. Սպասման ռեժիմի առկայություն

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո ՀՊԹԿ-ներն ապահովում են սպասման ռեժիմի առկայություն:

4. Նվազ էներգասպառման ռեժիմ

Սույն կիրարկող ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարի հետո ՀՊԹԿ-ները պետք է ունենան նվազ էներգասպառման ռեժիմ կամ նույնպիսի հատկանիշներով օժտված նմանատիպ ֆունկցիա՝

– ՀՊԹԿ-ը օգտագործողի կողմից վերջին անգամ միջամտությունից և (կամ) այլքի փոփոխությունից հետո որոշակի ժամանակ ակտիվ ռեժիմով աշխատելուց հետո անցնում է սպասման ռեժիմի՝ երկու րոպե առաջ տալով նախազգուշացնող ազդանշան.

– «նվազ էներգասպառման ռեժիմի» ֆունկցիան պետք է լինի սարքի ստանդարտ կազմում:

5. Չափումները

1-ին և 2-րդ կետերում նշված էներգիայի սպառման ծավալը չափվում է վստահելի, ճշգրիտ ու վերարտադրելի ընթացակարգով, որը հիմնվում է լայն տարածում ունեցող ժամանակակից մեթոդների վրա:

0,50 Վտ կամ ավելի հզորության չափումները կատարվում են 2%-ից պակաս կամ դրան համարժեք անհավանականությամբ՝ ապահովելով 95% վստահելիության մակարդակ: 0,50 Վտ կամ պակաս հզորության չափումները կատարվում են 0,01 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք անհավանականությամբ՝ ապահովելով 95% վստահելիության մակարդակ:

6. Համապատասխանության գնահատման նպատակով՝ արտադրողների կողմից տրամադրվող տեղեկությունները

5-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակով՝ տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալ տվյալները՝

ա) սպասման և ակտիվ ռեժիմների դեպքում՝

– Վտ-երով արտահայտված և հարյուրերորդականի մակարդակով կլորացված էներգասպառման տվյալները, ներառյալ լրացուցիչ ֆունկցիաների և (կամ) բաղադրիչների համար ծախսված էներգիայի վերաբերյալ տվյալները

– կիրառված չափման մեթոդը

– չափման ժամանակահատվածը

– սարքի ռեժիմի ընտրության կամ ծրագրման կարգի նկարագիրը

– դեպքերի հաջորդականությունը՝ հասնելու համար այնպիսի վիճակի, որ սարքավորումն ավտոմատ կերպով փոխի ռեժիմները

– սարքավորումի աշխատանքին վերաբերող ցանկացած նշում

բ) չափումների ստուգումների պարամետրերը

- մթնոլորտի ջերմաստիճանը
- վոլտով արտահայտված փորձնական լարումը և հերցով արտահայտված հաճախականությունը
- էլեկտրամատակարարման համակարգի ընդհանուր ոչ գծային աղավաղումները
- փորձաստուգումների ընթացքում էներգասնուցման լարման տատանումները
- էլեկտրական փորձաստուգման համար կիրառված չափման միջոցների, դրանց կարգի և ... մասին տեղեկությունները և փաստաթղթերը
- մուտքային ազդանշաններ ռադիոհաճախականության շերտում (վերգետնյա թվային հեռարձակումների դեպքում) կամ միջանկյալ հաճախականությունների շերտում (արբանյակային հեռարձակումների դեպքում)
- տեսաձայնային փորձնական ազդանշաններ, ինչպես ներկայացված է MPEG-2 տրանսպորտային հոսքերում
- ստուգումների համապատասխանեցում

Հեռարձակման ազդանշանների ընդունման համար ՀԹԿ-ից սնուցվող օժանդակ սարքերի, ինչպիսիք են՝ վերգետնյա ակտիվ ալեհավաքը, արբանյակային LNB-ը կամ մալուխային կամ հեռահաղորդակցային մոդեմը, էլեկտրաէներգիայի ծախսի մասին տեղեկությունները չեն ներառվում տեխնիկական փաստաթղթերում:

7. Սպառողների տեղեկատվության նպատակով՝ արտադրողների կողմից տրամադրվող տեղեկությունները

Արտադրողներն ապահովում են, ՀՊԹԿ-ների սպառողները ՀՊԹԿ-ների սպասման և ակտի ռեժիմների համար ունենան վատտերով արտահայտված և տասնորդականի մակարդակով կլորացված էներգասպառման տվյալները:

Ստուգման ընթացակարգը

2005/32/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի հսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները, անհրաժեշտության դեպքում, պետք է I Հավելվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում նշված կիրառելի պահանջների դեպքում կիրառեն ստուգումների հետևյալ ընթացակարգը:

Ավելի քան 1,00 Վտ էներգասպառման դեպքում՝

անդամ պետությունների մարմիններն անցկացնում են մեկ միավորի փորձաստուգում:

Մոդելը համարվում է սույն Կանոնակարգի I հավելվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխանող, եթե, անհրաժեշտության դեպքում, ակտիվ և սպասման ռեժիմի վիճակում դրանց արդյունքները չեն գերազանցում սահմանային թույլատրելի չափորոշիչները ավելի, քան 10% տոկոսով:

Հակառակ դեպքում, փորձաստուգման են ենթարկվում ևս երեք միավորներ:

Մոդելը համարվում է սույն Կանոնակարգին համապատասխանող, եթե ակտիվ ու սպասման ռեժիմների վիճակում կատարված վերջին երեք փորձաստուգումների արդյունքների միջին տվյալը չի գերազանցում սահմանային թույլատրելի չափորոշիչները ավելի քան 10%-ով:

1,00 Վտ-ից պակաս կամ դրան համարժեք էներգասպառման դեպքում անդամ պետությունների մարմինները փորձաստուգման են ենթարկում մեկ միավոր:

Մոդելը համարվում է սույն Կանոնակարգի I հավելվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխանող, եթե, անհրաժեշտության դեպքում, ակտիվ և (կամ) սպասման ռեժիմի վիճակում դրանց արդյունքները չեն գերազանցում սահմանային թույլատրելի չափորոշիչները ավելի քան 0,10 Վտ-ով:

Հակառակ դեպքում, փորձաստուգման են ենթարկվում ևս երեք միավորներ: Մոդելը համարվում է սույն Կանոնակարգին համապատասխանող, եթե ակտիվ և (կամ) սպասման ռեժիմների վիճակում կատարված վերջին երեք փորձաստուգումների արդյունքների միջին տվյալը չի գերազանցում սահմանային թույլատրելի չափորոշիչները ավելի քան 0,10 Վտ-ով:

Հակառակ դեպքում, մոդելը համարվում է չհամապատասխանող:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Հենանիշերը

Սահմանվում են հետևյալ կողմնորոշիչ հենանիշերը՝ 2005/32/ԵՀ հրահանգի I հավելվածի 3(2) մասի նպատակով: Դրանք վերաբերում են սույն Կանոնակարգի ընդունման ժամանակ առկա լավագույն տեխնոլոգիաներին՝

ՀՊԹԿ՝ առանց որևէ լրացուցիչ հատկանիշի՝

- ակտիվ ռեժիմ՝ 4,00 Վտ
- սպասման ռեժիմ՝ առանց ցուցադրման ֆունկցիայի՝ 0,25 Վտ
- անջատված ռեժիմ՝ 0 Վտ

ՀՊԹԿ՝ համակցված կոշտ սկավառակով

- ակտիվ ռեժիմ՝ 10,00 Վտ
- սպասման ռեժիմ՝ առանց ցուցադրման ֆունկցիայի՝ 0,25 Վտ
- անջատված ռեժիմ՝ 0 Վտ

Վերը նշված հենանիշերը սահմանված են հիմնական լրակազմ, «նվազ էներգասպառման ռեժիմ» և էներգասնուցման անջատման ֆունկցիա ունեցող ՀՊԹԿ –ի հիման վրա: